



USAID |
FROM THE AMERICAN PEOPLE

ARMENIA

Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

**Կոռուպցիան Հայաստանում.
հանրային կարծիքի հետազոտություն 2008**

Հիմնական արդյունքների ներկայացում

9 դեկտեմբերի, 2008թ.
Երևան

Կոռուպցիայի մասին հանրային կարծիքի հետազոտության նպատակները

- կոռուպցիայի վերաբերյալ հանրության պատկերացումներն ու կարծիքը,
- կոռուպցիայի հետ կապված անձնական փորձն ու վարքագիծը,
- հանրային իրազեկությունը հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին,
- ՉԼՄ-ների և այլ աղբյուրների դերը կոռուպցիայի մասին հասարակական իրազեկության ապահովման գործում:

Յետազոտության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

- Պատվիրատու՝ Կասալս ենդ Ասոշիեյթս Ինք. (C&A)
- Յետազոտություն իրականացնող՝ ԵՀՀ Յետազոտական ռեսուրսների կոմպասյան կենտրոններ (CRRC)
- Դաշտային աշխատանքներ՝ սեպտեմբերի 21-ից հոկտեմբերի 6-ը Անձնակազմ՝ 8 խմբավար և 38 զրուցավար
- 1,549 պատասխանող (18-ը լրացած) ՀՀ բոլոր մարզերից
- Ընտրանքի մեթոդը՝ բազմաստիճան քլաստերային, ներկայացուցչական ողջ հանրապետության, քաղաքային և գյուղական վայրերի համար
- Ընտրանքի սխալը. $\pm 2.49\%$
- Կշիռներն՝ ըստ տարիքի և սեռի

Հետազոտության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (շարունակություն)

Մարզը	Հարցազրույցների թիվը		
	Քաղաքային վայրեր	Գյուղական վայրեր	Ընդամենը
Արագածոտն	18	48	66
Արարատ	32	85	117
Արմավիր	47	77	124
Գեղարքունիք	39	60	99
Կոտայք	88	55	143
Լոռի	107	45	152
Շիրակ	86	50	136
Սյունիք	49	24	73
Տավուշ	27	39	66
Վայոց Ձոր	11	18	29
Երևան	540	0	540
Ընդամենը	1,044	501	1,545


Հետազոտության հիմնական արդյունքները. իրավիճակ և վարքագիծ

- Հարցվածների 60 տոկոսը բավարարված չէ երկրում տիրող իրավիճակից, իսկ 86 տոկոսը կոռուպցիան համարում է Հայաստանի առջև ծառայած լուրջ հիմնախնդիր:
- Կոռուպցիան համընդհանուր տարածում ունի տարբեր ոլորտներում և հանրային կառույցներում:
- Սակայն, հարցման մասնակիցների 30 տոկոսը կարծում է, որ անցյալ տարվա համեմատ կոռուպցիայի մակարդակը ցածր է, այն դեպքում, երբ միայն 17 տոկոսն է գտնում, որ այն ավելի բարձր է:
- Կաշառատվությունն առավել տարածում ունի ճանապարհային ոստիկանության, մաքսային, և առողջապահական հաստատություններում:
- Հարցման մասնակիցները զգալիորեն հակված են շարունակելու կաշառատվությունը՝ որպես զանազան խնդիրների լուծման արդյունավետ միջոց, և հազիվ թե պետական մարմիններին հայտնեն կոռուպցիոն դեպքերի մասին:

Չետագոտության հիմնական արդյունքները. իրագրություն և տեղեկատվական աղբյուրներ

- Հայաստանի հասարակությունը բավարար չափով իրագրված չի հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների մասին. հարցման մասնակիցների միայն 6 տոկոսը գիտի, որ կան այդպիսի ՅԿ-ներ:
- Հարցվածներից միայն յուրաքանչյուր երրորդն է տեղյակ կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին, իսկ կեսից ավելին դժվարանում է հավատալ, որ իշխանությունն անկեղծ ցանկություն և հնարավորություն ունի հաղթահարելու կոռուպցիան:
- Երկրում կոռուպցիայի մակարդակը գնահատելիս, հարցվածների համար տեղեկատվության հիմնական աղբյուր են ծառայում ՉԼՄ-ները և ընկերների ու ծանոթների, ազգականների կամ ընտանիքի անդամների պատմածները:
- Հանրությունն առավել հաճախ դիտում է Յ1 և Շանթ հեռուստաալիքները՝ առավելապես վստահելով վերջինիս:


Որքանո՞վ եք բավարարված Հայաստանի ընդհանուր իրավիճակով* (% ամբողջի մեջ)



* այստեղ եւ այնուհետեւ % ամբողջի մեջ, եթե այլ նշում չկա


Որո՞նք են այսօր Հայաստանի ամենալուրջ խնդիրները

(3 պատասխանի հնարավորություն, % պատասխանողների թվից)




Կոռուպցիան հիմնախնդիրների շարքում ըստ բնակավայրերի տիպի

(3 պատասխանի հնարավորություն, Երևան՝ n=540; այլ քաղաքներ՝ 509; գյուղական համայնքներ՝ 500)




«Որքանո՞վ է լուրջ կոռուպցիայի խնդիրը Հայաստանում»

(Երևան n=540; այլ քաղաքներ՝ 509; գյուղական համայնքներ՝ 500)




«Համամիտ եք արդյոք, որ ՀՀ քաղաքացիները կոռուպցիան Հայաստանում համարում են բնական երևույթ»


(Երևան n=540; այլ քաղաքներ՝ 509; գյուղական համայնքներ՝ 500)



**«Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է այսօր կոռուպցիայի մակարդակը
Հայաստանում անցյալ տարվա համեմատությամբ»:**




Պետական հաստատություններում և հիմնարկներում առկա կոռուպցիայի ընկալումը




■ մեծապես կոռումպացված է
 ■ որոշ չափով է կոռումպացված
 ■ Չգիտեմ
■ շատ քիչ է կոռումպացված
 ■ բնավ կոռումպացված չէ

«Պետական կառավարման ոլորտում առկա կոռուպցիայի համատեքստում Ձեր կարծիքով կոռուպցիան առավել տարածված է ցածրաստիճան, միջին, թե՞ բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում»:



Ոլորտներում և ծառայություններում առկա կոռուպցիայի ընկալումը




■ չատ տարածված է ■ որոշ չափով տարածված է ■ չգիտեմ ■ քիչ է տարածված ■ շատ քիչ է տարածված

Ամենակոռումպացված ընկալվող ոլորտներ և ծառայություններ

Առողջապահություն	38%
Ընտրական համակարգեր/գործընթացներ	33%
Ոստիկանություն (բացառությամբ ճանապարհային ոստիկանության)	30%
Կրթություն	26%
Չարկային ծառայություն	25%
Ճանապարհային ոստիկանություն	21%
Մաքսային իշխանություններ	18%



Կոռուպցիոն վարքագծի մասին պատկերացումներ



Կոռուպցիոն վարքի հիմնական դրդապատճառները

Չկա այլ ուղի նպատակին հասնելու համար	61%
Գործընթացները /ընթացակարգերը արագացնելու համար	46%
Պատժից/պատժամիջոցներից խուսափելու համար	20%
Բարձր պարտադիր վճարներից խուսափելու համար	20%
Պատշաճ վերաբերմունք (ծառայություն) ստանալու համար	13%
Արտոնյալ վերաբերմունք/արտոնություններ ստանալու համար	13%
Այլընտրանքային եկամուտի աղբյուրներ ստանալու համար	12%
Այլ	6%

Արձագանք կաշառք տալու պահանջին կամ վերցնելու առաջարկին



Կաշառք տալու և չտալու պատճառները. պրագմատիզմ եւ բարոյականություն

Կաշառք կտայի ... (կաշառք տվողների %-ը՝ n=792)	
...որովհետև չկա ծառայությունը ստանալու այլ ուղի	77%
...և կփորձեի սակարկել գինը	8%
...որովհետև բոլորն են տալիս	8%
...որովհետև անհրաժեշտ է հարցերը արագ լուծել	2%
...որովհետև պետք է կարիքներս հոգամ	1%
այլ	4%
չգիտեմ/պատ. չկա	1%

Կաշառք չէի տա... (կաշառք չտվողների %-ը՝ n=634)	
...քանի որ դա անընդունելի է ինձ համար	58%
...և կփորձեմ հարցերը լուծել օրինական ճանապարհով	19%
...որովհետև դրամի կարիք ունեմ	8%
...որովհետև պատժվելու վտանգը բարձր է	5%
...որովհետև դա անօրինական է	1%
...ելևելով իմ հավատքից/դավանանքից/խղճից	1%
այլ	4%
չգիտեմ/պատ. չկա	4%

Կաշառք վերցնելու և չվերցնելու պատճառները

Կաշառք կվերցնեի ... (կաշառք վերցնողների %-ը՝ n=323)


...որովհետև դրամի կարիք ունեմ	48%
...որովհետև բոլորն են վերցնում	34%
...որովհետև ստիպված եմ «կիսվել» իմ ղեկավարության հետ	7%
այլ	9%
չգիտեմ/պատ. չկա	2%

Կաշառք չեի վերցնի (կաշառք չվերցնողների %-ը՝ n=1,114)

...որովհետև ինձ համար անընդունելի է	73%
...որովհետև պատժվելու վտանգը բարձր է	11%
...և կփորձեի հարցերը լուծել օրինական ճանապարհով	6%
այլ	9%
չգիտեմ/պատ. չկա	2%


Կաշառքի պահանջներն ըստ ոլորտների և ծառայությունների

(%-ը այն պատասխանողների, որոնք դիմել կամ օգտվել են վերջին 12 ամիսների ընթացքում)




«Պետական պաշտոնյաների հետ առնչվելիս, որքա՞ն հաճախակի են Ձեզ հետ պատահել հետևյալ երևույթները.»

(%-ը այն պատասխանողների, որոնք դիմել են պետական պաշտոնյաների)




«Անձամբ Դուք ի՞նչ կարող եք անել Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար» կրավորակ՝ան կեցվածք



Ո՞ր հաստատությանը կդիմեիք՝ պաշտոնյայի կողմից կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկություն հաղորդելու համար:

(% ը այն պատասխանողների, ովքեր գիտեն թե ուր պետք է դիմել, n=396)



Կոռուպցիայի մասին չհայտնելու պատճառները


Մեր հասարակությունում կոռուպցիայի մասին հայտնելը չի խրախուսվում




Նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի




Կոռուպցիայի մասին հայտնողին կպատժեն



Կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ ինձ չի վնասում



Կոռուպցիայի մասնակիցներն այդ քայլին դիմում են հիմնականում տնտեսական դժվարությունների պատճառով



■ Այո

■ Չգիտեմ/պատ. չկա

■ Ոչ

Հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն դերի ընկալումը


Ձեզ հայտնի է արդյոք Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ	
Այո	6%
Ոչ	87%
Չգիտեմ թե ՀԿ-ն ինչ է	2%
Պատասխան չկա	5%

Հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն դերի ընկալումը

Հակակոռուպցիոն օժանդակության հետևյալ տեսակներից որո՞նք կցանկանայիք, որպեսզի ՀԿ-ները Ձեզ տրամադրեին:


Տեղեկատվություն՝ կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիների իրավունքների մասին	61%
Տեղեկատվություն՝ կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիների պարտականությունների մասին	38%
Տեղեկատվություն հակակոռուպցիոն օրենսդրության մասին	28%
Տեղեկատվություն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել/բողոքել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի մասին	21%
Հակակոռուպցիոն կրթական ծրագրեր	20%
Անվճար իրավախորհրդատվություն՝ կոռուպցիայի մասին Ձեր բողոքը ձևակերպելու համար	16%
Հակակոռուպցիոն իրազեկությանն ուղղված գործունեություն	14%
Անվճար ներկայացուցչություն դատարանում	12%
Անվճար իրավախորհրդատվություն՝ կոռուպցիայի դեպքերի մասին տեղեկատվություն և ապացույցներ հավաքագրելիս	11%
Անվճար իրավախորհրդատվություն՝ կոռուպցիայի դեպքերի մասին փաստաթղթերի պատրաստման և հանձնման համար	10%
Այլ/Ոչինչ (վերոհիշյալներից ոչ մեկը)/Պատասխան չկա	21%

Տեղա՛կ եք Հայաստանի կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման ծրագրի մասին




«Որքա՞նով է արդյունավետ եղել հետևյալ կառույցների պայքարը կոռուպցիայի դեմ»

(%-ը այդ կազմակերպությունների մասին տեղյակ պատասխանողների թվից)




Որքանով է արդյունավետ ՀՀ կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը




Որո՞նք են այն տեղեկատվության աղբյուրները, որոնց վրա հիմնվելով գնահատում եք երկրի կոռուպցիայի մակարդակը

(3 պատասխանի հնարավորություն, Երևան n=540, այլ քաղաքներ՝ 509, գյուղական համայնքներ՝ 500)




- Չանգվածային լրատվամիջոցներ
- Ընկերների - ծանոթների հետ զրույցներ
- Ազգականների կամ ընտանիքի անդամների հետ զրույցներ
- Անձնական փորձ
- ՀԿ-ների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն

Հայաստանում գործող հաստատությունների եւ գրասենյակների կոռումպացվածության աստիճանը: Ի՞նչ է փոխվել (առավել կոռումպացված 1-ից մինչեւ բնավ չկոռումպացված 4 միավոր)



Կոռումպացվածության աստիճանը տարբեր ոլորտներում եւ ծառայություններ մատուցելիս: Ի՞նչ է փոխվել (առավել կոռումպացված 1-ից մինչեւ բնավ չկոռումպացված 4 միավոր)



Շնորհակալություն

Լրացուցիչ տեղեկություններ.

Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի մասին՝ www.maac.am էջկայքից;

ԵՀՀ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների մասին՝ www.crrc.am էջկայքից;